Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԽՈՐՀՈՒՐԴ) ՆԻՍՏԻ

Նիստն անցկացվել է ՆԳ նախարարությունում (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 130)

2026 թ. հուլիսի 7-ին, ժամը՝ 16.00 – 17.40

Նախագահել է՝ Ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը

(այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցել են Խորհրդի անդամներ՝

Հայկ Պետրոսյան	«Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ
Անի Չատինյան	Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Ստյոպա Սաֆարյան	Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտ
Մկրտիչ Ավետիսյան	«Ռազմավարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ
Ալլա Հարությունյան	«Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ
Շուշանիկ Սահակյան	«Երիտասարդական գաղափարներ» երիտասարդական ՀԿ
Մարատ Ատովմյան	«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ
Սպարտակ Սարգսյան	«ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Լուսինե Հակոբյան	«Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ
Մամիկոն Խուրշուդյան	«Եռամիասնություն հանուն զարգացման» ՀԿ
Բաբկեն Սեդրակյան	«Պատվավոր հյուպատոսների միություն» ՀԿ
Արման Անտոնյան	«Այլընտրանքային փոխադրամիջոցների զարգացման» և «Հեծանվորդների, սիրողական հեծանվասպորտի և սպորտային տուրիզմի միջազգային ֆեդերացիա» ՀԿ-ներ

Վլադիմիր Դաշյան	«Կյանքի աստղի միջազգային կոմիտե» միջազգային մարդասիրական ՀԿ
Վահրամ Հովեյան	«Բայազետ» կենտրոն ՀԿ
Ժորա Աբգարյան	«Տիգրան Աբգարյան» մարտական պատրաստության հայրենասիրական բարեգործական ՀԿ
Արա Ղարագյոզյան	«Փինք» իրավապաշտպան ՀԿ
Արսեն Իգիթյան	Հայաստանի պետհիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների արհմիության կազմակերպական աշխատանքների և արտաքին կապերի մասնագետ, ԵՄ-ՀՀ քաղհասարակության պլատֆորմի անդամ

Բացակայել են՝

Արփի Հարությունյան	Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ
Անի Տերտերյան	R5 արտակարգ իրավիճակների և անվտանգության նախագծերի կառավարման կենտրոն
Կարինե Դավթյան	«Կանանց իրավունքների տուն» ՀԿ
Մարիա Հարությունյան	Տեխնիկական համագործակցության և զարգացման գործակալության Հայաստանյան մասնաճյուղի առանձնացված ստորաբաժանում ոչ առևտրային կազմակերպություն

Ներքին գործերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն) մասնակցել են՝

Արմեն Ղազարյան	ՆԳ նախարարի տեղակալ
Նելլի Դավթյան	ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիական ծառայության պետ
Նարեկ Սարգսյան	ՆԳ նախարարի մամուլի քարտուղար, ՆԳՆ հանրային հաղորդակցության և իրազեկման վարչության պետ (հասարակական խորհրդի համակարգող պաշտոնատար անձ)

Արմինե Մինասյան

Հանրային հաղորդակցության և
իրազեկման վարչության հանրային
հաղորդակցության և մոնիթորինգի բաժնի
գլխավոր մասնագետ (հասարակական
խորհրդի պատասխանատու
պաշտոնատար անձի փոխարինող)

Օրակարգում ընդգրկված էր հետևալ հարցը.

1. ԵՄ վիզաների ազատականացման գործընթացում արձանագրված առաջընթացի ներկայացում («Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ նախագահ Լուսինե Հակոբյանի առաջարկի հիման վրա):

Ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը ողջունել է մասնակիցներին և շնորհակալություն հայտնել քննարկմանը մասնակցելու համար: Նախարարը նշել է, որ ներկայումս ՀՀ-ն ԵՄ հետ վիզաների ազատականացման շուրջ ակտիվ երկխոսություն ունեցող միակ երկիրն է: Պաշտոնական երկխոսության մեկնարկից (2024 թ.) կարճ ժամանակ անց ՀՀ-ը ստացել է Գործողությունների ծրագիրը, որը ինչպես Հայաստանի, այնպես էլ եվրոպական գործընկերների գնահատմամբ, աննախադեպ արագ ընթացք է: Ստացվել է նաև առաջին գնահատման փուլի առաջընթացի զեկույցը, հաջորդիվ նախատեսվում են ԵՄ գնահատող առաքելությունների պարբերական այցեր՝ նպատակ ունենալով գնահատել գործողությունների ծրագրով սահմանված չափանիշների կատարման ընթացքը: Հենց այդ գնահատումների արդյունքներն են հիմք ծառայելու Եվրոպական հանձնաժողովի կողմից հետագա որոշումների կայացման համար:

Նախարար Սարգսյանը ներկայացրել է Գործողությունների ծրագրում ընդգրկված չորս հիմնական ուղղությունները.

Փաստաթղթերի պաշտպանություն՝ ներառյալ կենսաչափական տվյալները

Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումները լիովին համահունչ են ՀՀ կառավարության բարեփոխումների օրակարգին, ինչն էականորեն նպաստում է դրանց արդյունավետ իրականացմանը:

Կենսաչափական համակարգի ներդրման գործընթացն ավարտական փուլում է և նախատեսվում է, որ այն ամբողջությամբ կգործարկվի ընթացիկ տարվա աշնանը: Հայաստանը փաստացի ապահովում է ոչ միայն օրենսդրական, այլև գործնական

հենանիշերի կատարումը, ինչը գնահատվելու է ԵՄ հետագա առաքելությունների շրջանակներում:

Սահմանների համալիր կառավարում, միգրացիոն կառավարում, ապաստանի տրամադրում

Սահմանների համալիր կառավարման ոլորտը պահանջում է առավել համակարգված միջգերատեսչական համագործակցություն, միասնական ռազմավարական մոտեցումներ, ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ և մասնագիտական կարողությունների շարունակական զարգացում. գործընթացում ներգրավված բոլոր պատասխանատու մարմիններն իրականացնում են համապատասխան միջոցառումներ:

Մեզ համար սկզբունքային է, որ բոլոր միջոցառումները ոչ միայն կատարվեն սահմանված ժամկետներում, այլև լիարժեք համապատասխանեն որակական չափանիշներին: Իրականացված յուրաքանչյուր բարեփոխում պետք է լինի փաստացի և բովանդակային, քանի որ ԵՄ գնահատող առաքելությունները գնահատում են՝ հիմնվելով իրական արդյունքների վրա:

Հասարակական կարգ և անվտանգություն. Կազմակերպված հանցագործության, ահաբեկչության և կոռուպցիայի կանխարգելում և դրանց դեմ պայքար

Կոռուպցիայի դեմ պայքարի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի շրջանակում անհրաժեշտ է ապահովել արդյունավետ իրավական մեխանիզմների ներդրում, ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում և այնպիսի համակարգերի ձևավորում, որոնք թույլ կտան երկարաժամկետ արդյունքներ ապահովել: Այս ուղղությամբ կարևոր է ոչ միայն առանձին միջոցառումների իրականացումը, այլև դրանց որակական ապահովումը՝ եվրոպական չափանիշներին համապատասխան:

Արտաքին հարաբերություններ և հիմնարար իրավունքներ

Այս ուղղությունը ներառում է մի շարք կարևոր չափանիշներ, որոնք ուղղված են Հայաստանի կողմից եվրոպական արժեքներին և չափանիշներին համապատասխան բարեփոխումների իրականացմանը:

Կարևոր նշանակություն ունեն մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմների ամրապնդումը, հիմնարար իրավունքների և

ազատությունների ապահովումը, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխան պետական քաղաքականության իրականացումը: Վիզաների ազատականացման գործընթացի առաջընթացի գնահատումը կատարվում է բացառապես արդյունքահեն մոտեցմամբ և պայմանավորված է բոլոր հենանիշերի արդյունավետ և հետևողական իրականացմամբ:

ԵՄ վիզաների ազատականացման գործընթացի վերաբերյալ կարևոր շեշտադրումներ ներկայացնելուց հետո նախարար Արփինե Սարգսյանը լսել է մասնակիցների դիտարկումներն ու առաջարկությունները և պատասխանել հարցերի:

ՆԳ նախարարին կից հասարակական խորհրդի անդամների ներկայացրած հարցեր

1. Հայաստանի պետհիմնարկների և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների արհմիության կազմակերպական աշխատանքների և արտաքին կապերի մասնագետ, ԵՄ-Հայաստան քաղաքացիական հասարակության պլատֆորմի անդամ Արսեն Իգիթյանը շնորհակալություն է հայտնել նախարար Սարգսյանին՝ հարցերը հանգամանալից ներկայացնելու համար: Մինչ հիմնական հարցին անդրադառնալը՝ նա հույս է հայտնել, որ առաջիկայում կոլեկտիվ պայմանագիր կկնքվի Ներքին գործերի նախարարի և ՆԳՆ համակարգի աշխատողների արհմիության միջև:

Արսեն Իգիթյանն անդրադարձել է միգրացիայի կառավարման ոլորտում առկա մի շարք հարցերի, մասնավորապես, Հայաստանում ապօրինի և անկանոն աշխատանքային միգրացիայի, հարկադիր աշխատանքի և թրաֆիքինգի ռիսկերին, հանրային ծառայությունների համարանիշի տրամադրման ընթացակարգին: Նա նաև ներկայացրել է տարբեր պետական մարմինների միջև տեղեկատվության փոխանակման և համագործակցության կարևորությունը՝ օտարերկրյա աշխատողների համար աշխատանքի թույլտվությունների տրամադրման, հետագա վերահսկողության գործընթացներում:

Նախարարը շնորհակալություն է հայտնել դիտարկումների համար և նշել, որ բարձրացված հարցերը ներառված են միգրացիոն կառավարման ոլորտում մշակվող նոր ռազմավարության շրջանակում: Նախարարն ընդգծել է, որ ռազմավարությունը նպատակ ունի ապահովել առավել տվյալահեն և ապացույցների վրա հիմնված միգրացիոն քաղաքականություն, վիզային քաղաքականության որոշ գործող լուծումներ դիտարկվում են որպես ժամանակավոր և միջանկյալ գործիքներ, որոնք ևս վերանայման փուլում են: Ապօրինի միգրացիայի, հարկադիր աշխատանքի և թրաֆիքինգի հարցերը իրավապահ մարմինների մշտական ուշադրության ներքո են, սակայն համակարգային բնույթի աճ արձանագրելու հիմքեր ներկայումս չկան: Իսկ նոյեմբերի 1-ից նախատեսվող թվայնացման

գործընթացները, այդ թվում՝ օտարերկրացիների կացության և նույնականացման համակարգերի զարգացումը, հնարավորություն կտան ապահովել ավելի արդյունավետ վերահսկողություն և հետագծելիություն:

Արփինե Սարգսյանը պարզաբանել է, որ ՀԾՀ տրամադրման քաղաքականության նպատակը ՀՀ-ում գտնվող անձանց նույնականացման միասնական համակարգ ձևավորելն է՝ պետական ծառայությունների մատուցումն առավել արդյունավետ կազմակերպելու համար:

ՆԳ նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանը հավելել է, որ աշխատանքի հիմքով կացության կարգավիճակների տրամադրման թվայնացման արդյունքում արդեն ներդրվել են գործնական վերահսկողական մեխանիզմներ: Աշխատանքային շտեմարանների փոխգործակցությունն արդեն տալիս է արդյունքներ, և տրամադրված տվյալների հիման վրա Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը մի շարք գործատուների նկատմամբ իրականացրել է վարչարարություն: Արմեն Ղազարյանը տեղեկացրել է, որ Workpermit համակարգում գործում է ինքնաշխատ ազդանշանային մեխանիզմ, որի միջոցով, եթե երեք ամիս շարունակ աշխատողի համար չի արձանագրվում եկամտահարկի վճարում կամ այն սահմանված շեմից ցածր է, տեղեկատվությունն ավտոմատ փոխանցվում է Տեսչական մարմին:

2. «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ նախագահ Լուսինե Հակոբյանը հետաքրքրվել է վիզաների ազատականացման գործընթացի ժամկետներով և հետագա քայլերով, ինչպես նաև հարցրել՝ նախատեսվո՞ւմ է արդյոք ԵՄ-ի կողմից աջակցության ծրագիր՝ Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի իրականացմանն աջակցելու նպատակով:

Նախարարը նշել է, որ Հայաստանը նպատակ ունի երկու տարվա ընթացքում որակապես ավարտել վիզաների ազատականացման բոլոր հենանիշերի իրականացումը՝ ընդգծելով, որ գործընթացի վերջնական ավարտը կախված է նաև ԵՄ որոշումներից:

Նախարարը տեղեկացրել է, որ Եվրոպական միության հաջորդ գնահատման առաքելությունը նախատեսվում է սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին, և մինչև այդ Հայաստանը պետք է շարունակի արձանագրել նոր առաջընթաց բոլոր հիմնական ուղղություններով: Նախարար Արփինե Սարգսյանը տեղեկացրել է, որ արդեն մեկնարկել է ԵՄ ֆինանսավորմամբ Լիտվայի գործընկերների կողմից իրականացվող շուրջ 2.2 միլիոն եվրո բյուջե ունեցող ծրագիր, որն ուղղված է վիզաների ազատականացման գործընթացին աջակցելուն: Նախարարի խոսքով՝ այս ոլորտներում Հայաստանը կարևորում է ինչպես Լիտվայի, այնպես էլ եվրոպական այլ երկրների փորձի կիրառումը: Նա հավելել է, որ արդեն ձեռք են բերվել պայմանավորվածություններ Լիտվայի գործընկերների հետ՝ առաջնահերթ կարիքների համատեղ գնահատման և անհրաժեշտ աջակցության արագ կազմակերպման վերաբերյալ:

3. «Փինք» իրավապաշտպան ՀԿ իրավաբան Արա Ղարագյոզյանն անդրադարձել է վիզաների ազատականացման գործընթացի համատեքստում հակախտրականության օրենսդրությանը՝ նշելով, որ խտրականության դեմ պայքարը կարևոր բաղադրիչ է: Նա հետաքրքրվել է խտրական վերաբերմունքի կանխարգելման ուղղությամբ նախարարության տեսլականով:

Նախարարը շնորհակալություն է հայտնել հարցի համար՝ ընդգծելով ապացույցների վրա հիմնված քննարկումների կարևորությունը և նշել, որ ոստիկանությունում խտրականության կանխարգելման և ծառայողների վարքագծի փոփոխության հիմնական գործիքը շարունակական կրթությունն ու վերապատրաստումն է: Նախարարությունն անցել է ամենամյա վերապատրաստումների համակարգի, որտեղ ներառված են ինչպես մասնագիտական, այնպես էլ մարդու իրավունքներին, խտրականության կանխարգելմանը, խոշտանգումների և վատ վերաբերմունքի արգելքին վերաբերող թեմաներ:

4. «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ փոխնախագահ Մարատ Ատովմյանը երկու խնդիր է բարձրացրել, մասնավորապես, տարածաշրջանային զարգացումների արդյունքում Հայաստան տեղափոխվող գործարարների կացության կարգավիճակի և սփյուռքահայերի քաղաքացիություն ստանալու վերաբերյալ:

Նախարարը շնորհակալություն է հայտնել բարձրացված հարցերի համար և նշել, որ ազգությամբ հայերի քաղաքացիության հարցը ներառված է մշակվող միգրացիոն ռազմավարության շրջանակում: Նա ընդգծել է, որ պետությունը, հարգելով սփյուռքահայերի իրավունքները, միաժամանակ պարտավոր է համոզվել, որ քաղաքացիություն ստանալու համար ներկայացվող տվյալներն ու փաստաթղթերը բավարար են անձի ինքնությունը և հայկական ծագումը հաստատելու համար: Քաղաքացիության շնորհումը պետության համար ենթադրում է ինչպես իրավունքների, այնպես էլ պարտավորությունների ձևավորում, ուստի գործընթացը պետք է հիմնված լինի իրավաչափ և ստուգելի չափանիշների վրա:

Անդրադառնալով գործարարների կացության կարգավիճակի և հետագա գործունեության հարցին՝ նախարարը համաձայնել է, որ գործնականում կարող են առաջանալ խնդիրներ և նշել, որ հարցը կքննարկվի Կենտրոնական բանկի գործընկերների հետ՝ հասկանալու բանկերի կողմից կիրառվող ռիսկերի գնահատման չափանիշները և հնարավորության դեպքում ապահովելու ավելի համակարգված մոտեցում:

Նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանը նշել է, որ Հայաստանի Սահմանադրությունն արդեն նախատեսում է, որ ազգությամբ հայերը, Հայաստանում մշտական բնակություն հաստատելուց հետո, կարող են դիմել քաղաքացիության համար:

Արմեն Ղազարյանը նաև նշել է, որ ներկայումս ձեռնարկատիրական գործունեության հիմքով կացության կարգավիճակ ստանալու համար հնարավոր է դիմել իրավաբանական անձի գրանցումից անմիջապես հետո

Նոյեմբերի 1-ից ուժի մեջ մտնող կարգավորումներով սահմանվելու են նվազագույն չափանիշներ, այդ թվում՝ շրջանառության և կանոնադրական կապիտալի վերաբերյալ, որպեսզի հնարավոր լինի տարբերակել իրական գործունեություն իրականացնող կազմակերպություններին:

Այս համատեքստում «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ փոխնախագահ Ալլա Հարությունյանը նշել է, որ խնդիրը հիմնականում վերաբերում է որոշ երկրների քաղաքացիներին՝ պայմանավորված միջազգային պատժամիջոցների ու ռիսկերի գնահատման քաղաքականությամբ:

5. Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտի հիմնադիր և տնօրեն Ստյոպա Սաֆարյանը շնորհակալություն է հայտնել հանդիպման համար և բարձրացրել օրակարգից դուրս մի քանի հարց:

Մասնավորապես, բարձրացվել են կառավարության նոր կազմում նախարարի հետագա պաշտոնավարման, վերջին ամիսների ներքաղաքական լարվածության, արտաքին միջամտությունների և հիբրիդային սպառնալիքների՝ ներքին անվտանգության ու հանցավորության դինամիկայի վրա հնարավոր ազդեցության ուսումնասիրության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կողմից մշակվող անվտանգային ռիսկերի պարբերական մոնիթորինգի նախաձեռնության շուրջ համագործակցության հարցերը:

Ներկայացվել են նաև տեղական արտադրության փրկարարական սարքավորումների կիրառման ուղղությամբ համագործակցության շարունակականության և Տավուշում արձանագրված խոշոր կարկտահարությունից հետո ստեղծված աշխատանքային խմբի գործունեության արդյունքների վերաբերյալ հարցեր:

Անդրադառնալով կարկտահարության հետևանքներին՝ նախարարը նշել է, որ փոխվարչապետի գլխավորությամբ ստեղծված աշխատանքային խումբն աշխատանքներ է իրականացնում երկու հիմնական ուղղությամբ՝ պատճառված վնասների գնահատման և հնարավոր փոխհատուցման ծրագրերի նախապատրաստման, ինչպես նաև գործող հակակարկտային կայանների արդյունավետության գնահատման և դրանց հետագա շահագործման վերաբերյալ ռազմավարական մոտեցումների մշակման ուղղությամբ: Ըստ նախարարի՝ վերջնական արդյունքները կհրապարակվեն աշխատանքների ավարտից հետո:

Ներքին անվտանգության վերաբերյալ նշվել է, որ առանձին ուսումնասիրություն դեռևս չի իրականացվել, քանի որ ներկայում ամփոփվում են կիսամյակային

գնահատականները: Միաժամանակ արձանագրվել է պետական իշխանության, հասարակական կարգի և անվտանգության դեմ ուղղված առանձին իրավախախտումների ակտիվացում, որոնց նկատմամբ նախարարությունը ցուցաբերել է հետևողական արձագանք:

Նախարարը կարևորել է նաև կրիպտոակտիվների շրջանառության հնարավոր ազդեցության շարունակական ուսումնասիրությունը՝ օրենսդրական վերջին փոփոխությունների համատեքստում: Նա ողջունել է անվտանգային ռիսկերի մոնիթորինգի նախաձեռնությունը և հայտնել նախարարության պատրաստակամությունը՝ համագործակցելու և անհրաժեշտության դեպքում առաջարկելու լրացուցիչ գնահատման ցուցիչներ:

Անդրադառնալով կառավարության նոր կազմի վերաբերյալ հարցին՝ նախարարը նշել է, որ համապատասխան որոշումները գտնվում են վարչապետի իրավասության շրջանակում, և կառավարության կազմը հայտնի կդառնա համապատասխան որոշումներից հետո:

6. «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ փոխնախագահ Ալլա Հարությունյանն անդրադարձել է Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի շրջանակում Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց, ապաստան հայցողների և այլ երկրներից ժամանած փախստականների ինտեգրման հարցերին: Մասնավորապես՝ հետաքրքրվել է, թե ՆԳՆ-ն ինչ ուղղություններով կարող է աջակցել ինտեգրման գործընթացների բարելավմանը:

Նախարարը նշել է, որ այս փուլում վերջնական գնահատման ցուցիչները դեռևս սահմանված չեն, և եվրոպական գործընկերների հետ շարունակվում են դրանց հստակեցմանն ուղղված աշխատանքները: Միաժամանակ ընդգծել է, որ ինտեգրման հարցում Կառավարության մոտեցումը հստակ է: Ղարաբաղից բռնի տեղահանված ավելի քան 115 հազար անձանցից շուրջ 40 հազարն արդեն ստացել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, իսկ ներկայացվող դիմումների ընթացիկ դինամիկան ցույց է տալիս, որ առաջիկայում այդ ցուցանիշը կարող է հասնել մոտ 50 տոկոսի:

Ինտեգրման գործընթացին նպաստում են նաև Կառավարության կողմից իրականացվող սոցիալական ծրագրերը, այդ թվում՝ բնակապահովման և աջակցության, որոնք պարբերաբար վերանայվում և կատարելագործվում են: Այս գործընթացում կարևոր դեր ունեն նաև հասարակական կազմակերպությունները, որոնց աջակցությունն ու ներգրավվածությունն էական նշանակություն ունեն:

Փախստականների և ապաստան հայցողների մասով ևս շարունակվում են օրենսդրական դաշտի բարեփոխումները: Առաջիկայում նախատեսվում է առաջ տանել

նաև քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերող օրենսդրական նախաձեռնությունը և այն ներկայացնել Ազգային ժողովի քննարկմանը:

Փախստականների և ապաստան հայցողների մասով ևս շարունակվում է օրենսդրական դաշտի բարեփոխումը: Նախատեսվում է առաջիկայում իրականացնել նաև քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ օրենսդրական նախաձեռնությունը և ներկայացնել Ազգային ժողով:

7. «Այլընտրանքային փոխադրամիջոցների զարգացման» և «Հեծանվորդների, սիրողական հեծանվասպորտի և սպորտային տուրիզմի միջազգային ֆեդերացիա» ՀԿ-ների հիմնադիր-նախագահ Արման Անտոնյանը խոսել է Երևանի խցանումների և քաղաքի բեռնաթափման գործընթացի վերաբերյալ՝ հաշվի առնելով, որ ՆԳ նախարարությունը՝ ի դեմս Պարեկային ծառայության, իրականացնում է ճանապարհային երթևեկության կազմակերպման և անվտանգության ապահովման գործառույթներ:

Արփինե Սարգսյանը նշել է, որ թեման բավական ծավալուն է, և առաջարկել է այն ներառել հաջորդ նիստի օրակարգում՝ ավելի ամբողջական քննարկման համար:

Ինչ վերաբերում է ՆԳ նախարարության գործառույթներին, նախարարը նշել է, ՆԳ նախարարությունը չի որոշում ճանապարհների վերադասավորման, միակողմանի կամ երկկողմանի երթևեկության սահմանման, գծանշումների և նմանատիպ հարցերը: Դրանք այլ մարմինների լիազորությունների շրջանակում են: Միևնույն ժամանակ, նախարարությունը սերտ համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գլխավորությամբ ձևավորվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի շրջանակում քննարկվում են Երևանի բեռնաթափման հարցերը՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ լուծումներով:

Անհրաժեշտ է միասնական մոտեցում և գործընկերային աշխատանք՝ հասկանալու համար, թե որ հարցերը կարող են լուծվել արագ, իսկ որոնք պահանջում են երկարաժամկետ ծրագրեր:

8. Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի իրավական բաժնի համակարգող Անի Չատինյանը շնորհակալություն է հայտնել նախարարին արդյունավետ համագործակցության համար՝ ընդգծելով, որ արդյունքում մի շարք համակարգային խնդիրներ լուծումներ են ստացել:

Նա հետաքրքրվել է նաև, թե վիզաների ազատականացման գործընթացի շրջանակում դիտարկվո՞ւմ է արդյոք բարձր ռիսկայնություն ունեցող երկրներից անձանց մուտքի նկատմամբ կանխարգելիչ մեխանիզմների ներդրումը: Բացի այդ, հարց է

բարձրացրել որոշ միջազգային իրավական համաձայնագրերի, այդ թվում՝ փոխադարձ իրավական օգնության մասին պայմանագրերի վերանայման կամ փոփոխման հնարավորության վերաբերյալ՝ հաշվի առնելով, որ առանձին գործընկեր երկրներում առկա են մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրներ:

Նախարարը շնորհակալություն է հայտնել համագործակցության համար և նշել, որ բարձր ռիսկայնություն ունեցող երկրների մասով այս պահին քննարկվում է համապատասխան լուծումների ներդրման հնարավորությունը: Չնայած նրան, որ պետական բոլոր օղակները ունեն անհրաժեշտ տեղեկատվություն և փորձ, միայն ընդհանուր գիտելիքների վրա հիմնվելը բավարար չէ, անհրաժեշտ է ունենալ ինստիտուցիոնալ գործիքներ, որոնք հնարավորություն կտան համակարգված ձևով գնահատել ռիսկերը:

Այս ուղղությամբ քննարկվում է սահմանին ռիսկերի գնահատման համակարգի ներդրման հնարավորությունը: Նպատակն այն է, որ Հայաստանի Հանրապետություն մուտք գործող անձանց վերաբերյալ տեղեկատվությունը գնահատվի առավել արդյունավետ, և բարձր ռիսկի դեպքում համապատասխան մարմինները ժամանակին ստանան անհրաժեշտ ազդակներ:

9. «Ռազմավարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն Մկրտիչ Ավետիսյանը շնորհավորել է Պարեկային ծառայության կազմավորման հնգամյակի կապակցությամբ և շնորհակալություն հայտնել իրականացված բարեփոխումների համար:

Նա հետաքրքրվել է նաև, թե նախատեսվո՞ւմ է ստեղծել հանրային իրազեկման և հետադարձ կապի մշտական հարթակ, որի միջոցով քաղաքացիները կկարողանան հետևել բարեփոխումների ընթացքին, տեղեկանալ իրականացվող քայլերի մասին, ինչպես նաև ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտարկումները:

Նախարարը պատասխանել է՝ այս գործընթացում կարևոր է պահպանել հավասարակշռությունը՝ մի կողմից չստեղծել չարդարացված հանրային ակնկալիքներ, մյուս կողմից՝ չնվազեցնել այն մեծածավալ աշխատանքը, որն արդեն իրականացվել է:

ՆԳ նախարարության կայքում հրապարակված են վիզաների ազատականացման գործողությունների ծրագիրը՝ ինչպես բնօրինակ, այնպես էլ հայերեն տարբերակով, ինչպես նաև գնահատման զեկույցները: Քաղաքացիները կարող են ծանոթանալ դրանց և հասկանալ, թե ինչ պահանջներ պետք է իրականացնի Հայաստանը՝ գործընթացում առաջ շարժվելու համար:

Իրականացվում են նաև տարբեր իրազեկման աշխատանքներ, հարցազրույցների և այլ ձևաչափերով ներկայացվում է գործընթացը, այդ թվում՝ ժամանակագրական զարգացումները:

Նախարարը նշել է, որ գործընթացը դրական դինամիկա ունի, և Եվրոպական միությունը ևս բարձր է գնահատում Հայաստանի արձանագրած առաջընթացը: Միաժամանակ ընդգծել է, որ նպատակն է յուրաքանչյուր փուլ ավարտել համապատասխան գնահատականով և դրա արդյունքների մասին պատշաճ կերպով տեղեկացնել հանրությանը:

Որպես օրինակ՝ անդրադարձել է կենսաչափական համակարգի ներդրմանը՝ նշելով, որ այս ուղղությամբ վստահ խոսելու հիմքեր կան, քանի որ գնահատման զեկույցներում ևս արձանագրվել է, որ Հայաստանը գտնվում է առաջանցիկ փուլում և մոտ է գործընթացի ավարտին:

10. «Կյանքի աստղի միջազգային կոմիտե» միջազգային մարդասիրական ՀԿ գործադիր մարմնի ղեկավար Վլադիմիր Դաշյանը ներկայացրել է երկու ուսումնական ձեռնարկ՝ նպատակահարմարության դեպքում ոստիկանների և փրկարարների ֆիզիկական պատրաստության գործընթացում կիրառելու համար:

Վլադիմիր Դաշյանը հայտնել է, որ մի շարք նկատառումներ ունի կապված երեխաների անվտանգության մշակույթի ձևավորման թեմայի հետ, որոնք պատրաստ է ներկայացնել:

Նախարարը հստակեցրել է, որ հարցը կտեղափոխվի հաջորդ քննարկումների շրջանակ: Արփինե Սարգսյանն առաջարկել է թեմաները քննարկել ավելի նպատակային ձևաչափով՝ յուրաքանչյուր անգամ կենտրոնանալով կոնկրետ ուղղության վրա:

Նախարար Սարգսյանը շնորհակալություն է հայտնել հասարակական խորհրդի անդամներին՝ կարևորելով խորհրդի գործունեությունը և խորհրդի անդամների ակտիվ մասնակցությունը:

ՀՀ ՆԵՐՔԻՆ

ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ **ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ**